ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Արտաշես 1-ին թագավորի ներքին և արտաքին քաղաքականությունը
ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Մաքունց Արևիկ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գորիսի թիվ 5 հիմնական դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Նոննա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3
2. Արտաշես Ա-ի գահակալումը: Հայկական հողերի միավորումը----------4
3. Արտաշես Ա–ի արտաքին քաղաքականությունը և Մեծ Հայքի միջազգային հեղինակության աճը----------6
4. Արտաշես Ա-ի ներքին քաղաքականությունը,Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը--7
5. Այլ բարենորոգումներ----------9
6. Դասի պլանի նմուշ-օրինակ ----------9
7. Եզրակացություն----------12
8. Օգտագործված գրականության ցանկ----------13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն՝ նրա կենսագրությունն է: Հայ ժողովուրդն աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Նա պատմական ասպարեզ է իջել անհիշելի ժամանակներից և անցել զարգացման բարդ ու դժվարին, բայց և փառավոր ու հերոսական ճանապարհ: Գալով հազարամյակների խորքերից՝ հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմություն ու մշակույթ: Այդ ճանապարհին մեր պատմության ամենափառահեղ էջերից մեկն էլ Արտաշեսյան արքայատոհմի ստեղծումն է:

Հռոմի ներթափանցումն Արևելք և հաղթանակը Սելևկյանների նկատմամբ բարենպաստ պայմաններ ստեղծեցին հայկական թագավորությունների վերականգնման համար: Նորաստեղծ հայոց պետություններից ավելի կենսունակը Մեծ Հայքի թագավորությունն էր: Եվ դա շատ կողմերով պայմանավորված էր Արտաշես արքայի (Ք.ա.189-160թթ.) նպատակասլաց ու եռանդուն գործունեությամբ, ով հիմք դրեց Արտաշեսյան արքայատոհմին:

Հետազոտական աշխատանքում անդրադարձ ենք կատարել Արտաշես Ի-ի գահակալության ընթացքին՝ հիմնական շեշտը դնելով արքայի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ կատարված բարեփոխումների ուղղություններին, բնագավառներին, դրանց իրագործմանը և արդյունքներին: Հետևաբար չափազանց արդիական է դրանք մեկտեղելու, համադրելու և համակողմանի հետազոտության ենթարկելու խնդիրը:

Թեմայի նպատակը և խնդիրները: Թեմայի ուսումնասիրության նպատակն է համակողմանիորեն լուսաբանել Արտաշես Ի-ի կառավարման ժամանակաշրջանը:

Հետազոտական աշխատանքի հիմնական **խնդիրներն են՝**

- գնահատել Մեծ հայքի Արտաշեսյանների հիմնադիր արքայի ձեռքբերումներն ու բացթողումները,տեղն ու դերը հայոց պատմության մեջ,
- բացահայտել Արտաշես Ի-ի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, արդյունքները
- հնարավորության սահմաններում ներկայացնել այդ շրջանում տվյալ փոխհարաբերությունների այն դրվագների փորձը, որը օգտակար է նաև մերօրյա պետականության համար:

Հետազոտման օբյեկտը և առարկան: Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը Արտաշես թագավորի ներքին և աքրտաքին քաղաքականությունն է, առարկան՝ ներքին քաղաքականության մեջ կատարված բարեփոխումների ձևերն ու մեթոդները:

Օգտագործված գրականության տեսություն: Հետազոտական աշխատանքը շարադրված է հայերեն աղբյուրների և ուսումնասիրությունների, աշխատությունների քննական հետազոտության ու վերլուծության հիման վրա:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Հետազոտության մեթոդաբանության հիմքում ընկած են աղբյուրների համադրման, պատմահամեմատական, պատմաքննական, պատմավերլուծական մեթոդները և պատմականության սկզբունքը:

ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Ք.ա. II դ. սկզբներին Մերձավոր Արևելքում միջազգային հարաբերությունները բավականին սրվել էին: Սելևկյանները լայն ծրագրեր էին մշակել Փոքր Ասիան ամբողջությամբ նվաճելու և ապա դեպի Եվրոպա արշավելու ուղղությամբ: Նվաճողական ծրագրեր ուներ նաև Հռոմեական հանրապետությունը: Այն իր հերթին ցանկանում էր նվաճել Փոքր Ասիան, ջախջախել Սելևկյաններին և իր տիրապետությունը հաստատել միջերկրածովյան ավազանում: Կողմերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ք.ա. 190 թ. Մագնեսիայի մոտ, որտեղ Սելևկյանները ծանր պարտություն կրեցին:

Մեծ Հայքի և Ծոփքի կառավարիչներ Արտաշեսն ու Զարեհը անմիջապես օգտվեցին Սելևկյանների պարտությունից և Ք.ա. 189 թ. իրենց անկախ թագավորներ հռչակեցին: Նրանց այդ գործողությունները խրախուսվել են Հռոմի կողմից, որն անմիջապես ճանաչել է նրանց անկախությունը: Նույն այդ ժամանակ իրենց անկախությունն են վերականգնել նաև Փոքր Հայքի և Կոմմագենեի հայկական թագավորությունները:Այսպիսով, ընդամենը մեկ տասնամյակ անց Մեծ Հայքը և Ծոփքը վերականգնեցին իրենց անկախությունը: Մեծ Հայքում հաստատվեց արքայական մի նոր հարստություն, որի հիմնադիրը դարձավ Արտաշես Ա-ն:

Արտաշես Ա-ն (Ք.ա 189-160 թթ.) հայոց պատմության ամենանշանավոր գործիչներից է: Նա անջնջելի հետք և հիշատակ է թողել մեր ժողովրդի պատմության մեջ: Իզուր չէ, որ նա կրել է «Մեծ», «Աշխարհակալ», «Բարի» պատվատիտղոսները, որոնք վկայում են արքայի նկատմամբ ժողովրդի տածած անսահման սիրո մասին: Արտաշեսի տոհմային ծագման մասին մեզ հաստատուն տեղեկություններ չեն հասել: Հայաստանում սահմանաքարերի վրա թողած արամեական արձանագրությունների մեջ Արտաշես Ա-ն իրեն անվանում է «որդի Զարեհի Երվանդական», որից կարելի է ենթադրել, որ Արտաշեսը ևս պատկանել է Երվանդունիների տոհմին կամ, իրեն «Երվանդական» անվանելով,ցանկացել է նշել, որ ինքը Երվանդունիների թագավորության օրինական ժառանգորդն է և նրա ավանդույթների շարունակողը: Միևնույն ժամանակ Արտաշեսը լայն ճանաչում է ունեցել Հին աշխարհում, հունահռոմեական բազմաթիվ հեղինակներ անդրադարձել են նրա գործունեությանը:

Մինչև Արտաշես Ա-ի գահակալությունը հարևան երկրները՝ օգտվելով Հայաստանի թուլացումից, զավթել էին նրա ծայրամասային երկրամասերը: Արտաշեսը և Զարեհը ձեռնամուխ եղան հայկական հողերի վերամիավորմանը: Հատկապես եռանդուն էր գործում Արտաշեսը: Նա ոչ միայն վերամիավորեց Մեծ Հայքից զավթված տարածքները, այլև քայլեր ձեռնարկեց իր թագավորությանը միացնելու նաև Ծոփքը, Կոմմագենեն և Փոքր Հայքը:

Իր թագավորության հենց սկզբում Արտաշեսն արշավանք է ձեռնարկում դեպի Արևելք և հասնում Կասպից ծովի ափերը: Նա այստեղ Մեծ Հայքին է միացնում Փայտակարանը և մինչև Ուրմիո լճի արևմտյան ափերն ընկած հողերը: Ապա արշավանք է ձեռնարկում դեպի հյուսիս՝ Վիրք, որը զավթել էր հայկական հինավուրց Գուգարք նահանգը: Հայոց զորավար Սմբատ Բագրատունին ջախջախում է վրացական բանակը և վերադարձնում զավթված տարածքները: Վրացական կողմը պարտավորվում է «դրամ հատել Արտաշես արքայի պատկերով» և զորք տրամադրել: Արևմուտքում Արտաշեսը գրավեց և Մեծ Հայքին միացրեց Կարնո երկրամասն ու Դերջան գավառը: Հարավում երկարատև ու արյունահեղ կռիվներից հետո Արտաշեսն ազատագրեց Սելևկյանների կողմից բռնազավթված Տմորիք երկրամասը:

Ծոփքի արքա Զարեհի մահից հետո, որն իր հերթին ազատագրել էր հայկական երկրամասերն արևմուտքում, Արտաշեսը փորձեց Ծոփքը նույնպես միացնել Մեծ Հայքին: Այստեղ, սակայն, հանդիպեց Ծոփքի դաշնակից Կապադովկիայի՝ համառ դիմադրությանը, որի հետևանքով անորոշ ժամանակով հետաձգվեց Ծոփքի միացումը:

Արտաշեսի ձեռնարկումների շնորհիվ հայկական տարածքների մեծ մասը միավորվեց մեկ ընդհանուր պետության՝ Մեծ Հայքի թագավորության մեջ: Այդ պատճառով է, որ հույն պատմիչը նրան անվանում է «Հայաստանի մեծ մասի կառավարիչ», իսկ մի այլ պատմիչ՝ հույն աշխարհագետ Ստրաբոնը, գրում է, որ «Հայաստանը... աճել է Արտաշեսի ջանքերով... և այստեղ բոլորը միալեզու են», այսինքն՝ հայալեզու են: Արտաշեսի ստեղծած ընդարձակ և հզոր թագավորության թագավորությունն արդեն իր սահմանների մեջ ընդգրկում էր գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը, պատմական Հայաստանի 15 նահանգներից 14-ը. Այրարատը, Սյունիքը, Գուգարքը, Տայքը, Արցախը, Ուտիքը, Վասպուրականը, Մոկքը, Բարձր Հայ-քը, Տարոնը, Աղձնիքը, Կորճեքի մեծ մասը, Փայտակարանը և Պարսկահայքը: Անշուշտ, դրա համար էլ Պոլիբիոսը Արտաշեսին անվանում է «Հայաստանի մեծագույն մասի կառավարիչ»:

ԱՐՏԱՇԵՍ Ա–Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՃԸ

Հայկական հողերի մեծ մասի միավորումով Մեծ Հայքի թագավորությունը վերածվեց Առաջավոր Ասիայում պատկառելի ուժ ներկայացնող մի պետության:

Ք.ա. 183-179 թթ. Փոքր Ասիայում պատերազմ բռնկվեց մի կողմից՝ Պոնտոսի ու Փոքր Հայքի և մյուս կողմից՝ Կապադովկիայի, Բյութանիայի ու նրանց դաշնակիցների միջև Մեծ Հայքը չեզոքություն պահպանեց, բայց ակտիվորեն ներազդեց կողմերի վրա՝ պատերազմը դադարեցնելու համար: Հաշտության պայմանագրի կնքմանը, որպես հեղինակավոր ու հարգված գահակալ, դատավորի կարգավիճակով հրավիրվեց նաև Արտաշես Ա-ն: Դիվանագիտական նուրբ ու ճշգրիտ քայլերով Արտաշեսը կարողացավ ընդարձակել Փոքր Հայքի տարածքը Պոնտոսի հաշվին՝ հետագայում վերջինս իր թագավորությանը միացնելու հեռահար ծրագրով: Իսկ երբ Ք.ա 161թ. սելևկյան սատրապ Տիմարքոսը Մարաստանում ապստամբեց և իրեն հայտարարեց անկախ թագավոր, Արտաշես Ա-ն Սելևկյաններին թուլացնելու նպատակով անմիջապես օգնության ձեռք մեկնեց նրան: Արտաշեսի արտաքին պատերազմների և քաղաքականության մասին մեզ որոշ տվյալներ են հասել նաև ժողովրդական վեպից, որն իր պատմության մեջ բերել է Խորենացին: Ըստ այդ վեպի Արտաշեսը կռիվներ է մղում նաև ալանների և նրանց միացած լեռնական ցեղերի դեմ, որոնք Վրաստանի կողմերից ներխուժել էին Հայաստանի հյուսիսային շրջանները: Տեղի ունեցած ճակատամարտում ալանները պարտվում են և ստիպված են լինում բարեկամական դաշինք կնքել Արտաշեսի հետ:

Հայկական և վրացական ժողովրդական վեպի կամ զրույցների համաձայն Արտաշեսը բարեկամական դաշն է կնքել նաև վրաց թագավորի հետ: Ըստ վրացական ավանդության, վրացիները պարտավորվում են Հայաստանի վրա արտաքին թշնամիների հարձակման դեպքում իրենց ամբողջ ռազմական ուժով օգնել Արտաշեսին, իսկ Հայաստանի սահմաններից դուրս՝ Արտաշեսի մղած պատերազմների ժամանակ նրան տրամադրել տասը հազար զորք:

ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՏԱՇԱՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Արտաշես Ա-ն մեծապես հայտնի է նաև իր բարենորոգչական և վերափոխիչ քաղաքականությամբ, որ նա իրականացրել է Մեծ Հայքի տնտեսական, վարչական, ռազմական և այլ բնագավառներում: Կարևոր նշանակություն ունեցավ հատկապես երկրի նոր մայրաքաղաք Արտաշատի հիմնադրումը: Քաղաքը կառուցվել է Այրարատյան դաշտում, Երասխ և Մեծամոր գետերի ջրկիցում Ք.ա 180-160թթ.:

Արտաշատի հիմնադրման վերաբերյալ արժեքավոր վկայություն է թողել Պատմահայր Մովսես Խորենացին. «Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են և այնտեղ բլուրը հավանելով, քաղաք է շինում և իր անունով կոչում է Արտաշատ»:
Հայաստանի քաղաքներն են,_ասում է Ստրաբոնը,_Արտաշատը (որն անվանում են Արտաշաշատ և որը հիմնել էր Հաննիբալը Արտաշեսի համար) և Արքսատան: Երկու քաղաքն էլ գտնվում են Արաքսի վրա, Արքսատան՝ Ատրպատականի մոտ, իսկ Արտաշատը՝ Արաքսյան դաշտի մոտ: Այս վերջինը շինված է գետի թև ձևացրած թերակղզու վրա, որի պարիսպները շուրջանակի պատում են գետը, բացի պարանոցից, որը փակված է խրամով և պատնեշով»:

Հույն պատմիչ Պլուտարքոսի հավաստմամբ, քաղաքի տեղանքն ընտրել է Կարթագենի վտարանդի զորավար Հաննիբալը, որն այդ ժամանակ՝ ապաստան էր գտել Հայաստանում: Նա է նաև կազմել քաղաքի հատակագիծը և, թագավորի առաջարկությամբ, գլխավորել շինարարական աշխատանքները. «Կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ մի քաղաք, որին թագավորը տվեց իր անունը և այն հռչակեց Հայաստանի քաղաքամայր»: Հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ քաղաքը կառուցվել է ներկայիս Խոր Վիրապի տեղում, առևտրական նշանավոր տարանցիկ մայրուղիների խաչմերուկում: Քաղաքը շրջափակված է եղել բարձր հզոր պարիսպներով, խրամով և պատվարով: Քաղաքի անառիկ դիրքը նկատի ունենալով՝ հռոմեացիներն այն անվանել են «Հայկական Կարթագեն»:

Քաղաքը բնակեցնելու համար Արտաշեսը կարգադրում է այնտեղ տեղափոխել Երվանդաշատի բնակչության ռազմական արշավանքների ժամանակ գերեվարվածների մի մասին: Շուտով Արտաշատը դարձավ Առաջավոր Ասիայի քաղաքական, տնտեսական և մշակութային նշանավոր կենտրոններից մեկը: Արտաշես Ա-ի նախաձեռնությամբ թագավորությունում կառուցվեցին մի շարք այլ քաղաքներ, ինչպես օրինակ՝ Զարեհավանը, Զարիշատը և այլն: Այդ քաղաքներն անվանվել են ի պատիվ Արտաշեսի հոր՝ Զարեհի:

Արտաշես Ա-ի բարենորոգումների շարքում կարևոր նշանակություն է ունեցել հողային հարաբերությունների կարգավորումը: Խնդիրն այն է, որ մեծապես սրվել էին հարաբերությունները գյուղական համայնքների և մասնավոր հողատերերի միջև: Վերջիններս տարբեր եղանակներով փորձում էին զավթել համայնական հողերը և գյուղացիներին զրկել իրենց գոյությունը պահպանելու միակ միջոցից: Հողազուրկ գյուղացին այլևս չէր կարող հարկ վճարել պետությանը և ի վիճակի չէր զինվորագրվել բանակին: Արտաշեսը՝ հասկանալով դրա ողջ վտանգավորությունը երկրի համար, կարգադրեց սահմանազատել համայնքի մասնավոր և տնտեսությունների հողերը Արտաշեսի հրամանով համայնքային և մասնատիրական հողերի միջև սահմանաքարեր կանգնեցվեցին, որով փորձ արվեց պաշտպանել համայնքի իրավունքները:

Քարակոթող սահմանասյուներն արժեքավոր են նրանով, որ ունեն արամեերեն արձանագրություններ: Դրանց մեծ մասի բովանդակությունը հետևյալն է. «Ես, Արտաշես արքան, որդի Զարեհի Երվանդական, բաժանեցի այս հողը գյուղ(եր)ի միջև»:

ՀՀ տարածքում հայտնաբերվել են ավելի ընդարձակ արձանագրություններ պարունակող սահմանաքարեր: 1971 թ. Իջևանի շրջանի Թեղուտ գյուղից գտնված երկու սահմանաքարերը, որոնք կրում են նույն արձանագրությունները, վերծանվել են այսպես՝ «Արտաշես արքա Երվանդականի, Զարեհի որդու, Բարու, թագակրի, Խշատրայի դաշնակցի, հաղթողի այն ամենը, ինչ քաջալերում է չարը. 10-րդ տարում: Արտաշեսը՝ Զարեհի որդին, բաժանեց հողը գյուղերի միջև», իսկ Սպիտակի մերձակայքից 1977 թ. գտնված սահմամաքար քարակոթողը ընթերցվել է՝ «Արտաշես արքա, Երվանդունի վեհը, որդի Զարեհի, բաժանող հողը, այստեղ, (այսինչ) գյուղի մեջ...»:

Ուսումնասիրելով և դասակարգելով հայտնաբերված Արտաշեսյան քարակոթող սահմանասյուները, հնագետները դրանց արամեատառ արձանագրություններում նշված «Երվանդական» բառը կապում են «Երուանդ»-ի՝ հնդեվրոպական ամպրոպի աստծո դիցանվան հետ և հնարավոր են համարում «Երուանդական» բառի «աստվածային», «աստվածազարմ» թարգմանությունը, որի դեպքում արքայի տիտղոսաշարը կստանա հետևյալ տեսքը. «Արտաշես արքան, Զարեհի որդին աստվածային» ...

Արտաշեսի թողած սահմանաքարերի մի մասը հայտնաբերվել է, իսկ մի քանիսը ցուցադրվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Բնական է,որ Հայկական լեռնաշխարհի և հայ ժողովրդի ճնշող մեծամասնության միավորումը մի միասնական պետության կազմի մեջ պետք է նպաստեր Հայաստանի նաև տնտեսական ու մշակութային կյանքի նոր վերելքին:

«Բայց ասում են, վկայում է Մովսես Խորենացին,_Արտաշեսի ժամանակ Հայոց աշխարհում անմշակ հող չէր կարելի գտնել ոչ լեռնային և ոչ դաշտային մասերում՝ երկրի շինության պատճառով»: Պատմահայրը մի այլ տեղ վկայում է, որ որոշ ժամանակ
հայերի մոտ ունայնացել էին մեծամեծ արվեստներն ու գիտությունները, մոռացվել էին նավագնացությունը,արհեստները, մասամբ նաև երկրագործությունը.սակայն այդ բոլորը վերստին ստեղծվում և զարգանում են Արտաշեսի օրոք:

Հին ժողովրդական վեպի մեջ Արտաշեսի մահվան առթիվ ասված է,որ նրա դագաղը, թագը և զենքերը ոսկեղեն էին,գահույքը,անկողինը և պատմուճանը՝ ոսկեթել բեհեզից:
Չնայած այս չափազանցություններին,այնուամենայնիվ դրանք մասամբ ցույց են տալիս,որ իրոք Արտաշեսի թագավորության տարիները տնտեսական և մշակութային կյանքի աննախընթաց զարգացման տարիներ են եղել:

ԱՅԼ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ

Արտաշես Ա-ն զգալի ջանքեր թափեց ռազմական գործի վերակառուցման ուղղությամբ: Նա ստեղծեց կանոնավոր ու լավ զինված բանակ:

Երկրի սահմանների պաշտպանությունը պատշաճ կազմակերպելու համար նա կազմեց չորս զորավարություններ: Մովսես Խորենացին այդ մասին վկայում է: «Զորքի իշխանությունն էլ (Արտաշեսը) չորս մասի է բաժանում արևելյան կողմի զորքը թողնում է (իր որդի) Արտավազդին, արևմտյանը տալիս է (իր որդի) Տիրանին, հարավայինը վստահում է (իր զորավար) Սմբատին, իսկ հյուսիսայինը՝ (իր որդի) Զարեհին»:

Պետության կառավարումը բարելավելու նպատակով Արտաշես Ա-ն թագավորությունը բաժանեց 120 վարչական շրջանների կամ գավառների, որոնք հունա-հռոմեական հեղինակներն անվանում էին ստրատեգիաներ կամ պրեֆեկտուրաներ: Սրանց մի մասում հետագայում ձևավորվեցին նախարարական իշխանությունները: Արտաշեսը կարգավորեց արքունի գործակալությունները: Երկրի կառավարման կարևորագույն գործակալությունները՝ սպարապետությունը և հազարապետությունը, հանձնեց իր մերձավորներին:

Թագավորական իշխանության հեղինակությունը ժողովրդի աչքում բարձրացնելու նպատակով Արտաշես Ա-ն սահմանեց թագավորի նախնիների պաշտամունքի կարգը: Արտաշատում կառուցեց Հայոց աշխարհի հովանավոր Անահիտ աստվածուհու տաճարը: Այնտեղ կանգնեցվեցին Արտաշեսի նախնիների արձանները, որոնց ժողովուրդը պետք է երկրպագեր: Տաճարներ կառուցվեցին նաև Հայաստանի մյուս քաղաքներում, ուր բացի հայոց աստվածներից, դրվեցին նաև Զևսի, Հերակլեսի, Ապոլոնի, Աթենասի, Ափրոդիտեի և հունական այլ աստվածների արձանները:

Արտաշեսը ճշգրտել է տվել օրացույցը, հստակեցրել տոմարը և կատարել բազում այլ բարեփոխումներ:

Արտաշեսը հայտնի է «Բարի» և «Բարեպաշտ» տիտղոսներով: Կատարած բազում նշանավոր գործերի համար Արտաշես Ա-ի մասին ժողովուրդը ստեղծել է երգեր, վեպեր, ուր գովերգվել են նրա իմաստությունն ու քաջությունը, շինարարական գործունեությունը, շեշտվել է նրա սերը հայրենիքի նկատմամբ: Արտաշեսի նկատմամբ ժողովրդի սերը արտահայտվել է նաև նրանում, որ հայերն իրենց օտար ծագումով, բայց սիրելի թագավորներին անվանել են Արտաշես (Զենոն, Տրդատ Ա և այլն):

Արտաշեսը մահացել է Ք.ա. շուրջ 160 թ.

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ

Կարևորելով թեմայի դասավանդումը դպրոցում՝ ներկայացնում ենք դասի պլանի նմուշ-օրինակ:

Առարկա ՝Հայոց պատմություն

Դասարան ՝ 6-րդ

Թեմա ՝ Արտաշես Ա-ի միավորիչ գործունեությունը և բարենորոգումները:

Դասի նպատակը՝

ա) Արտաշես Ա-ի և նրա կատարած բարեփոխումների մասին համակողմանի պատկերացումների ձևավորում:

բ) Բարենորոգումների կարևորության, անհրաժեշտության պարզաբանում:

գ) Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման անհրաժեշտությունը:
դ) Անհատական և խմբային աշխատանքների կատարման հմտությունների ձևավորում և զարգացում:
Անհրաժեշտ նյութեր՝ քարտեզ, նկարներ, իլյուստրացիաներ, դասագիրք, տետրեր, գրատախտակ:
Դասի տիպը՝ խառը կամ համակցված:
Միջառարկայական և ներառարկայական կապ՝ Հին աշխարհի պատմություն, աշխարհագրություն, գրականություն, կերպարվեստ:
Դասի ընթացքը.
Ուսուցման ձևը՝ ԽԻԿ համակարգով, որով ուսուցման համակարգը նպաստում է սովորողի քննադատական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ անելու ունակության և ստեղծագործական մտածողության զարգացմանը:
Ներածական մաս (խթանում) 5-7 րոպե
Կատարել «մտագրոհ», որը խմբի անդամների առջև կոնկրետ խնդիր է դնում, նրանցից յուրաքանչյուրը արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Տրվում է 4 րոպե:
Կատարել «պրիզմա» մեթոդը սկզբնաբառ վերցնելով «բարենորոգում»: Հիմնական նպատակն է ներկայացվող գաղափարի, հասկացության վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերահսկումն ու արձանագրումը:
Ապահովում է աշակերտների հետաքրքրությունն ակտիվությունը, նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ սկիզբ: Տրվում է 3 րոպե:
Հիմնական մաս (իմաստի ընկալում) 20-25 րոպե
Դասը վարել «Խճանկար» մեթոդով:
Թեման բաժանվում է առանձին հատվածների, տվյալ դեպքում.
ա) Հայկական երկրամասերի միավորում
բ) Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրում
գ) Հողային հարաբերությունների կարգավորում
դ) Ռազմական գործի վերակառուցում
ե) Վարչական բաժանում
զ) Նախնիների պաշտամունք

Աշակերտների մոտ ձևավորվում են 4-5 հոգանոց համագործակցային (մայր) խմբեր և տրվում են համարներ1,2,3,4,5.....

Նույն համարները կրող մասնակիցները միավորվում են նոր «փորձագիտական» խմբերում և սկսվում է նյութի ուսումնասիրություն և ուսուցում:1,1... 2,2... 3,3...

Աշակերտները վերադառնում են մայր խմբեր և հաշվետվություն տալիս խմբին իրենց փորձագիտական խմբի ուսումնասիրության նյութի մասին,հանդես գալով և սովորողի և սովորեցնողի դերում: Ամբողջանում են գիտելիքները: Մայր խմբերը դասարանին ներկայացնում են թեման՝ իրենց նախընտրած ձևով 5-10 ր.ընթացքում: «Խճանկարը» համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառման ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին:

Թեման ամփոփելու համար տալ չորս բանալի և մեկ կողպեք, որով տեքստից ընտրվում է հատվածի բովանդակությունը ներկայացնող չորս պարբերություն, ապա կազմվում է մեկ նախադասություն, որը արտահայտում է տվյալ տեքստի բովանդակությունը, հանդիսանալով կողպեքը:

Իմաստի ընկալման փուլում օգտագործված մեթոդները հնարավորություն են տալիս միևնույն նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից ու մի քանի անգամ:

Այս փուլի վերջում կատարել գնահատում, թույլ տալով աշակերտներին ինքնագնահատման միջոցով զգալ իրենց բացթողումները, լրացումները և այլն:

Ամփոփում (Կշռադատման փուլ) 5-7ր.

Կատարել «Քառաբաժան», մեթոդական հնար է, անհատական աշխատանք, որի ընթացքում աշխատող զույգը իր գրառումը ներկայացնում է ամբողջ դասարանին, տվյալ դեպքում «Արտաշես Ա-ի բարենորոգումները» ուսումնասիրության ժամանակ:

Ի՞նչ էինք տեսնում	Ի՞նչ էինք լսում
Ի՞նչ էինք զգում	Նոր վերնագիր և լոգո

Տնային առաջադրանք՝ 2-3ր.

Գործնական աշխատանք

Տետրում գծեք աշխարհի չորս կողմերը ցույց տվող սլաքները և յուրաքանչյուր սլաքի մոտ գրեք հայկական այն տարածքների անվանումները, որոնք միավորեց Արտաշես Ա-ն:

Կիրառվող մեթոդներ, մեթոդական հնարներ՝ Մտագրոհ, Պրիզմա, Խճանկար, 4բանալի և 1կողպեք, Քառաբաժան, Գործնական աշխատանք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի թեման ենթարկելով համակողմանի ուսումնասիրության՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին

Արտաշեսյան թագավորության ուսումնասիրությունը սերունդների համար նաև պատմական հիշողության ամրապնդում և պահպանում է նշանակում, ինչն էլ ազգային պատմության ուսուցման կարևոր բաղադրիչ է, հիշել անցյալը՝ նշանակում է ունենալ պատմություն, հիշել անցյալը՝ նշանակում է չկրկնել անցյալի սխալները, դասեր քաղել և ստեղծել ազգային արժեհամակարգային հենք ունեցող պետություն՝ ապավինելով սեփական երկրի հզոր բանակին, նրանց օրինակով արժևորելու սեփական պատմությունը, ամեն գնով պահպանելու հայի պատվախնդրությունը, պատրաստ լինելու դիմակայելու ժամանակի մարտահրավերներին:

Ք. ա. II դարի սկզբներին Մերձավոր Արևելքում սրված միջազգային հարաբերություն ները նպաստավոր էին Մեծ Հայքի և Ծոփքի կառավարիչներ Արտաշեսի և Զարեհի համար: Ընդամենը մեկ տասնամյակ անց Մեծ Հայքը և Ծոփքը վերականգնեցին իրենց անկախությունը: Տարիների անդուլ ու նպատակամետ գործունեությամբ Արտաշեսին հաջողվեց վերամիավորել Մեծ Հայքը մեկ միասնական վարչական,ռազմական,տնտեսական և կրթամշակութային համակարգի մեջ: Դրանով կայուն հիմքեր ստեղծվեցին նրա հետագա առաջընթացի և բարգավաճման համար: Իզուր չէ, որ նոր ստեղծված արքայատունը կոչվել է հենց նրա՝ Արտաշեսի անունով՝ Արտաշեսյան:Կատարած բազում նշանավոր գործերի համար ժողովուրդը նրա մասին երգեր ու վեպեր է ստեղծել, ուր գովերգել են նրա իմաստությունն ու քաջությունը, շեշտվել է նրա սերը հայրենիքի նկատմամբ: Արտաշես Ա-ի հաջորդները հաջողությամբ շարունակեցին նրա սկսած գործը միավորված հայկական երկրամասերի սահմաններն ընդարձակվեցին նրա թոռ՝ Տիգրանի օրոք դառնալով ծովից ծով Հայաստան:

Վերը նշված փաստերի շարադրանքից կարող ենք ասել, որ Արտաշեսը իր գահակալման ընթացքում կատարեց բազմաթիվ հայրենանվեր գործեր և հայոց հայոց պատմության մեջ մնաց որպես նշանավոր արքաներից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ժամկոչյան Հ.Գ., Աբրահամյան Ա. Գ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Պողոսյան Ս. Պ., Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975:
2. Խաչատրյան Հ. Հ., Արտաշես, Երևան, 1980:
3. Իշխանյան Ռ. Ա., Պատկերազարդ պատմություն հայոց, Երևան, 1989:
4. Հղումներ համացանցից՝
http://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%BF%D5%A1%D5%B7%D5%A5%D5%BD%D4%B1
http://www.findarmenia.com/arm/history/18/78/79